ԶԵՆՔԵՐԸ V—VIII ԴԱՐԵՐՈՒՄ

(Ըստ Դվինի հնագիտական պեղումների)

Ա. Ա. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Մեր վաղ շրջանի մատենագրության մեջ հիշատակված զենքի որոշ տեսակներ մեզ չեն հասել։ Միակ զենքերը, որոնց մասին մենք կարող ենք համեմատաբար ամբողջական պատկերացում կազմել՝ պեղումների ընթացքում դուրս եկած նյութերով, նետասլաքներն են, որոնք հայտնաբերվել են Դվինում, Գառնիում, ինչպես և պատահականորեն՝ նիզակները և պաշտպանական զենքի որոշ տեսակներ։

Ինչպես երևում է V—VII դդ. մատենագիրների վկայություններից, Դվինը, մարզպանական Հայաստանի մայրաքաղաք դառնալով, վերածվում է զինագործության խոշոր կենտրոնի։

Դվինը իբրև երկրի ռազմական ուժերի կենտրոն և հավաքատեղի, ունեցել է ընդարձակ զինանոցներ և պահեստներ՝ «տուն զինուց և ասպազինաց»[2]։

Դվինը շարունակում էր մնալ զինագործության կենտրոն նաև արաբների տիրապետության որոք։ Այդ մասին հետաքրքիր տեղեկություն է մեզ հայտնում Ղևոնդ պատմիչը, խալիֆաթի դեմ 774—775 թթ. Արտավազդ և Մուշեղ Մամիկոնյանների ապստամբության առնչությամբ։

«Եւ սկիզբն բանիս (ապստամբութեան) այսորիկ լինէր ի Յեռն Արտաւազդայ որ էր ի տանէ Մամիկոնէից. որոյ երթեալ ի մայրաքաղաքն Դուին կազմութիւն մեծ առնէր զօրաց իւրոց և ստանայր անդ զէնս և անօթս պատերազմի և վառէր զինքն զրահիւք և սաղավարտիւք և ամենայն սպառազինութեամբք, և մտերիմ զինքն երևեցուցանէր զօրացն Իսմայելի, իբր թէ մարտնչել ընդ Բշնամիս նոցա կամիցի»[3]։

Բացի խոշոր քաղաքներից և ամրոցներից, Ղևոնդի վկայությամբ, զինագործները պատերազմական գործողությունների ժամանակ անմիջականորեն գտնվում էին բանակի կազմում և զենքը պատրաստում կամ նորոգում էին տեղում։ Ահա թե ինչ է գրում պատմիչը Հայաստան մտած արաբական զորքերի մասին. «Հասանէին ի գաւառն Բագրեւանդ ի գիւղն Արձնի. անդ հարկանէին զրանակս իւրեանց առ եզերք գետոյն որ ընդ նա անցանէ. և ընդ նոսա ամենայն արուեստականք, և յարդարիչք զինուց. որք պատրաստէին զէնս և անօթս պատերազմի»[4]։

Զորքերը իրենց զենքի մի մասը լրացնում էին նաև ձեռք բերած ավարի հաշվին, մի բան, որը շատ բնական էր և կիրառվում էր ամենուրեք։ Եղիշեն հայտնում է, որ Խազխազի ճակատամարտից հետո հայկական զորքերը մեծ ավար վերցրին, այդ թվում նաև զենք։ «Եւ կուտէին բազում արծաթ և ոսկի, զզէնս և զզարդս զարի արանց և զքաջ երիվարաց»[5]։

Միջնադարյան պեղածո զենքի և մատենագրական տվյալների քննությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրության համար։ Հարկ է նշել, որ վերջին տարիների ընթացքում Անդրկովկասում, Միջին Ասիայում և Հյուսիսային Կովկասում նույնպես հայտնաբերվել են նույնանման լավ թվագրված զենքեր, որոնց միջոցով հնարավոր է ճշտել ոչ միայն Հայաստանից գտնված զենքերի, այլև նրանց ուղեկցող նյութերի ժամանակաշրջանը։

Հայաստանից հայտնաբերված վաղ միջնադարյան զենքերը բաժանում ենք երկու մեծ խմբի՝ հարձակողական և պաշտպանական։ Ներկա հոդվածում քննարկվելու են միայն հարձակողական զենքերը։ Պետք է նշել, որ երկաթից պատրաստված այս զենքերից մի քանիսը՝ հատկապես նե-

---

[1] Г. Тирацян, Уточнение некоторых деталей сасанидского вооружения по данным армянского историка IV в. н. э. Фавста Бузанда. „Иссл. по истории и культуре народов Востока". Сб. в честь акад. И. А. Орбели. М.—Л., 1961, էջ 474—486։

[2] Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 161։

[3] «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 138։

[4] Նույն տեղում, էջ 118։

[5] «Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», Երևան, 1957, էջ 77։

տասլաքները (տես ստորև), սկիզբ են առնում ավելի վաղ շրջանում և պահպանվում մինչև մ. թ. VIII դարը։ Մի այլ խումբ սկիզբ է առնում մ. թ. V դարից, հարատևելով մինչև XIII—XIV դարերը, մի հանգամանք, որը մեղանից պահանջում է մեծ զգուշություն նյութերը թվագրելիս։

ՆԵՏԱՍԼԱՔՆԵՐ.— Հայաստանի միջնադարյան գենքի ամենատարածված տեսակներից մեկը նետ ու աղեղն էր։ Մենք չենք կարող որոշակի բան ասել ուսումնասիրվող շրջանի աղեղների մասին, սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ աղեղների պատկերներ պահպանվել են ուսանյան արծաթե թասերի և V—VII դդ. բարձրաքանդակների վրա, օրինակ՝ Մանուել Ամատունու քանդակը Պտղնիի եկեղեցու հարավային մուտքի վերևի կամարի հորիզոնական մասի ձախ կողմում[6]։

Դվինում պեղումների ընթացքում գտնվել են շուրջ 150 նետասլաքներ և մոտ երեք տասնյակ էլ հայտնաբերվել են Գառնիից։ Նետասլաքներն իրենց ձևերով բազմազան են, և այդ բազմազանությունը բացատրվում է տարբեր հանգամանքներով։ Նախ՝ նետասլաքները արտադրվել են տարբեր կենտրոններում և նախարարական զորախմբերի կողմից բերվել են Դվին և ունեցել են որոշ առանձնահատկություններ։ Նետասլաքների մյուս խումբն, անկասկած, օտար ծագում ունի (իրանական, բյուզանդական, արաբական և այլն)։ Սակայն զուգահեռ նյութի սակավության պատճառով առայժմ հնարավոր չէ այդ խումբը առանձնացնել։ Գործածվել են նաև թունավոր նետասլաքներ, որոնց մասին մեզ հայտնում է Եղիշեն[7]. «Պատկանդարան դեղեալ նետիւք» (թունավորված նետերով լի կապարճ)։



Աղյուսակ I

Դվին քաղաքատեղիից հայտնաբերված նետասլաքները Կ. Ղաֆադարյանը բաժանում է 6 հիմնական խմբերի՝ ճանկավոր, եռանիստ ակոսավոր, տերևաձև տափակ, կոնաձև քառանիստ, սրածայր երկարավուն և տձև կամ անկանոն սրածայր[8]։ Հիմնականում համաձայնվելով նետասլաքների վերոհիշյալ ստորաբաժանման հետ, մենք առաջարկում ենք վաղ միջնադարյան նետասլաքների նոր դասակարգում։ Դվինի V—VIII դդ. նետասլաքները կարելի է բաժանել հետևյալ տեսակների։

Առաջին տեսակին պատկանում են եռանիստ նետասլաքները։ Հայաստանում այս տիպի նետասլաքներից գտնվել է շուրջ երեսուն հատ, որից 24-ը՝ Դվինի V—VII դդ. շերտից։ Սլաքները եռանիստ են, խոր ակոսներով, բոլոր պոչուկները կտրվածքում կլոր են։ Սլաքների երկարությունը 4—6 սմ է, պոչուկով՝ 8—10 սմ (պոչուկների մեծ մասը կոտրված է կամ թերի)։

Եռանիստ նետասլաքները հանդես են գալիս երեք տարբերակներով։ Առաջին տարբերակի սուր ծայրերից ելուստները երեք կողմերի վրա հետզհետե լայնանում են, որի հետևանքով առաջանում են խոր ակոսներ։ Ելուստները անմիջապես չեն կտրվում պոչուկի մոտ, այլ կորությամբ միանում են խնձորակին, որը միացած է պոչուկին։ Այս տարբերակը գտնվել է միայն Դվինից։ Սլաքի երկարությունը 4,5—6 սմ է, պոչուկի երկարությունը՝ 2—3 սմ (աղ. 1, 6, 7, 10, 11)։ Երկրորդ տարբերակը առաջինից զանազանվում է նրանով, որ ելուստները (թները) այստեղ շատ չեն դուրս ցցվում, որի հետևանքով ակոսները շատ խոր չեն, նետասլաքները ավելի մասսիվ են։ Սլաքների երկարությունը 4—5 սմ է, պոչուկները չեն պահպանվել (աղ. 1, 14—18)։ Երրորդ տարբերակը մոտենում է իր ձևով

6 Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները IV—VII դդ., Երևան, 1949, էջ 67—68, նկ. 45։

7 Եղիշե, էջ 6։

8 Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 161—163։

առաջինին, միայն այն տարբերությամբ, որ նլուստները կոթառի մոտ ընդհատվում են և ուղիղ անկյան տակ կտրվում։ Այս տիպի նետասլաքներ համեմատարար քիչ են գտնվել Դվինից։ Նույն ձևի նետասլաքների մենք հանդիպում ենք նաև էջմիածնի թանգարանից բերված իրերի մեջ (ՊՊԹ, 668)։ Սլաքի երկարությունը 4—6 սմ է, պոչուկները չեն պահպանվել (ադ. II, 1, 2, 3)։

Եռանիստ նետասլաքները իրենց գոյությունը Հայաստանում պահպանում են մինչև VII դ. վերջը և VIII դ. սկիզբը։

Հետաքրքրականն այն է, որ զուգահեռ նյութի քննությունը հաստատում է նույն երևույթը նաև Վրաստանում, Ադրբեջանում, Հյուսիսային Կովկասում, Ղրիմում, Միջին Ասիայում և այլուր, այսինքն այն տարածքում, որտեղ տարածված են եղել սկյութական նետասլաքները։

Դվինում գտնված եռանիստ նետասլաքները թվագրվում են V—VIII դդ., որը հաստատվում է միևնույն շերտից գտնված ինչպես հնագիտական հարակից առարկաներով, այնպես և մատենադրական ու զուգահեռ նյութերով։

Սլաքների մի խումբ գտնվել է քաղաքի կենտրոնական թաղամասի V—VII դարերում կառուցված մոնումենտալ շենքերի մնացորդների շերտից (ՊՊԹ, 1617/160, 304, 1905/101 և այլն)։ Երկրորդ խումբը դուրս է եկել միջնարերդից՝ հում աղյուսից շինված մեծ շենքի պեղումների ժամանակ։ Այդ շենքի կառուցումը իրավացիորեն վերագրվում է VIII դարին։ Նույն տիպի նետասլաք է հայտնաբերվել նաև բյուզանդական ծագում ունեցող մի ձիթաճրագի հետ, որի VI—VII դդ. պատկանելը որևէ կասկած չի հարուցում[9]։



Աղյուսակ II

Հետաքրքիր է, որ եռանիստ նետասլաքների վերաբերյալ վկայություն կա Խորենացու մոտ։ Նկարագրելով Հայկի և Բելի պատերազմը, Խորենացին ասում է. «Զայս իմացեալ աղեղնաւորին Հայկայ՝ յառաջ վարէ զինքն, մատ հասանէ յարքայն, լի քարշէ զլայնալիճն, զիպեցուցանէ զերեքթևեանն կրծից տախտակին և շնչտ ոնդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ յերկիր հարստի սլաքնս»[10]։

Նույն տիպի սլաքներ հայտնի են Ուրբնիսիից[11], Մինգեչաուրից[12], Փյանջիքենդից[13], Ա.Ֆրասիաբից[14] և այլ տեղերից VI—VIII դդ. շերտերից։ Եռանիստ նետասլաքների ի վերջո մենք հանդիպում ենք սասանյան արծաթե թասերի վրա պատկերված տարբեր տեսարաններում[15]։

Նետասլաքների երկրորդ տեսակը, որը իրավացիորեն համարվում է հին, ճանկավոր նետասլաքներն են։ Նրանք շատ հազվագյուտ են՝ ընդամենը 4 հատ, 3-ը Դվինից, իսկ մեկը պա-

---

[9] Oskar Wulff, Altchristliche und Mittelalterliche Byzantinische und Italienische Bildwerke, Berlin, 1909, էջ 243—263 աղյուսակ LXVI, 1343, 1344.

[10] «Մովսիսի Խորենացւոյ պատմութիւն Հայոց», Աշխատութեամբ Մ. Աբեղեանց և Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, էջ 36։

[11] Л. А. Чилашвили, Некоторые моменты археологического исследования Урбниси. „Вестник" Гос. музея Грузии им. акад. С. Н. Джанашиа, т. XXIV В, Тбилиси, 1963, табл. IV, 2. Նույնի՝ Городище Урбниси (վրացերեն), Тбилиси, 1964. էջ 124—126։

[12] Г. М. Асланов, Материальная культура Мингечаура I—VII вв. (автореферат), Баку, 1963, էջ 8։

[13] А. М. Беленицкий, Раскопки здания № 1 на шахристане Пенджикента (1947), МИА, № 15, էջ 103, աղ. 51։ Նույնի՝ Общие результаты раскопок городища древнего Пенджикента (1951—1953), МИА, № 66, էջ 136—137, նկ. 36։

[14] А. И. Тереножкин, Археологическая разведка на городище Афрасиаб в 1945 г., КСИИМК, вып. XVII, 1947.

[15] Я. И. Смирнов, Восточное серебро, СПБ, 1909, աղ. XXIX XXXII. И. А. Орбели, К. В. Тревер. Сасанидский металл, Л., 1935, աղ. 6, 12, 14, 15։

սահմանորեն է գտնված և տեղը հայտնի չէ։ Ճանկավոր նետասլաքները հայտնի են դեռևս շատ վաղ ժամանակներից, սակայն Դվինից հայտնաբերված օրինակները, ի տարբերություն հների, պատրաստված են երկաթից։ Դրանք ձվաձև կամ տափակ կտրվածք ունեցող նեղ տերևաձև սայրեր են, կարճ կլոր պոչուկով (երկարությունը՝ 5—9,5 սմ, պոչուկի երկարությունը՝ 1—4 սմ, թևերի լայնությունը՝ 1—3 սմ, աղ. II, 4, 5)։ Պոչուկի և ծայրի միացման տեղում նետասլաքը ունի կարճ կիսակլոր և երկարավուն սեղ ելուստներ։ Այն, որ ճանկավոր նետասլաքները լայն տարածում են ունեցել Հայաստանում՝ սկսած բրոնզի դարի վերջից և շատ սակավաթիվ են միջնադարում, և որ նրանք գտնվել են ստորին շերտերից, հանգեցնում են պրոֆ. Կ. Ղաֆադարյանի եզրակացությունը[16] և թույլ են տալիս թվագրել դրանք V—VII դդ.։ Հետագա պեղումները, անկասկած, հնարավորություն կտան ճշտումներ մտցնել այդ հարցում։

Երրորդ տեսակին են պատկանում ոսմրաձև կտրվածք ունեցող նետասլաքները, որոնց հետ մենք հարմար ենք գտնում տեղադրել նաև եռանկյունի կտրվածք ունեցողները (2 օրինակ)։ Այս տիպի նետասլաքները իրենց արտաքին տեսքով բաժանվում են երկու տարբերակների։ Առաջին տարբերակը կազմում են եռանկյունաձև կամ ոսմրաձև սայրով նետասլաքները, որոնք ունեն կարճ կլոր պոչուկ (մեկի՝ 2158/708 պոչուկը ուղղանկյուն է)։ Երկարությունը՝ 4,5—8 սմ է, սայրի երկարությունը՝ 2,5—4,5 սմ (աղ. I, 1—5)։ Երկրորդ տարբերակը իր արտաքին տեսքով կրկնում է առաջինի ձևերը, զանազանվելով նրանից իր չափերով և ծայրի ու պոչուկի միացման տեղում եղած օղակաձև ելուստի կամ կլոր խնձորակի առկայությամբ։ Երկարությունն է 8,5—10 սմ, ծայրի երկարությունը՝ 4—6,5 սմ (աղ. I, 8, 9)։

Այս տիպի նետասլաքները հիմնականում հայտնաբերվել են կենտրոնական թաղամասի V—VII դդ. շինությունների շերտից, իսկ մյուս մասը՝ միջնաբերդում, նույն ժամանակի շերտից։ Այսպես՝ 2047/48 նետասլաքը հայտնաբերվել է արաբական ժամանակաշրջանի մեծ շինության բակից, որի հետ նույն շերտից դուրս են եկել սասանյան կնքադրոշմներ։ Նույն տեղից է հայտնաբերվել 2048/3 նետասլաքը. այս վայրի կոմպլեքսում գտնվել են VIII դարով սահմանազատված եռանիստ նետասլաքներ։

Միջնաբերդի մի այլ հին շինությունից՝ մարզպանական ժամանակաշրջանի դահլիճից հայտնաբերված է 2237/57 նետասլաքը. 1913/155 նետասլաքը դուրս է եկել Կաթողիկե եկեղեցու հատակից՝ VII դ. բյուզանդական ոսկե դրամի հետ մեկտեղ։

Նույնանման նետասլաքներ գտնվել են Ուրբնիսիում և Միջին Ասիայում և թվագրվում են մեր նյութերի ժամանակով[17]։

Զորրորդ տեսակն են կազմում ձվաձև նետասլաքները, որոնք հայտնի են Դվինից և Գառնիից։ Նետասլաքների այս խումբը իր արտաքին տեսքով բաժանվում է երկու տարբերակի։ Առաջին տարբերակը տերևաձև նետասլաքներն են, կտրվածքում ձվաձև կարճ կլոր պոչուկով։ Երկարությունը՝ 5,5—9 սմ է, ծայրի երկարությունը՝ 4—7 սմ։ Երկրորդ տարբերակին են պատկանում նույնանման նետասլաքները, որոնք ինչպես երրորդ տեսակի երկրորդ տարբերակի նետասլաքները, ունեն կլոր խնձորակ՝ պոչուկի միացման տեղում։ Երկարությունը 5—9 սմ է, ծայրի երկարությունը (պոչուկների մի մասը ջարդված է)՝ 4,5—8 սմ (աղյ. I, 12, 13)։

Ձվաձև կտրվածք ունեցող նետասլաքները, որոշ նյութերի հիման վրա, կարելի է թվագրել սկսած V դարից։ Նախ՝ նետասլաքներից մեկը գտնվել է մարզպանական շրջանի պալատական դահլիճի շերտից, կնքադրոշմների հետ (ՊՊԹ, 2196/38), մի ուրիշ նետասլաք դուրս է եկել մեհյանի շրջանում ավելի վերին շերտից, եռանիստ նետասլաքի հարևանությամբ։ Նույն տիպի նետասլաքներ գտնվել են նաև Փյանջիքենդում՝ VI—VIII դդ. շերտերից[18]։ Շերտագրությունը և համեմատական նյութը մեզ հնարավորություն են տալիս ենթադրելու, որ նետասլաքների այս խումբը գոյություն է ունեցել սկսած V դարից, սակայն օգտագործված է նաև ավելի ուշ ժամանակաշրջանում։ Այդ են վկայում Դվինում և Գառնիում հայտնաբերված նույնատիպ նետասլաքները ավելի ուշ շրջանի նյութերի հետ՝ XII—XIII դդ. շերտում։

---

[16] Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 161։

[17] Л. А. Чилашвили, Некоторые моменты..., աղ. IV։ Նույնի՝ Урбниси, նկ. 35, 7, 8։ А. М. Беленицкий, Общие результаты..., նկ. 36։ Е. В. Зеймаль. Раскопки объекта XIV на Пенджикентском городище (1956 и 1957 гг.), МИА, № 124, նկ. 4, 1, 2։ Б. Я. Ставиский, Раскопки квартала жилищ знати в юго-восточной части Пенджикентского городища (объект VI) в 1951—1959 гг., МИА, 124, նկ. 38, 1, 2, 3։

[18] А. М. Беленицкий, նշվ. աշխ., էջ 137, նկ. 36, 3, 6, 7, Е. В. Зеймаль. նշվ. աշխ., նկ. 4, 4։

Քառանիստ նետասլաքները կազմում են բավականին մեծ խումբ՝ բաղկացած մի քանի տասնյակից։ Վերջիններս ունեն քառանիստ սայրեր, հիմնականում կարճ կլոր պոչուկով՝ փայտին ամրացնելու համար։ Իրենց արտաքին ձևով բաժանվում են երեք տարբերակների։ Առաջին տարբերակը կազմում են հավասարապես նեղացող քառանիստ սայրով և կարճ կլոր պոչուկով նետասլաքները։ Նրանց չափերը տատանվում են՝ ծայրերի երկարությունը 5,5—8 սմ է, պոչուկի երկարությունը՝ 1—2,5 սմ։ Երկրորդ տարբերակը բաղկացած է տերևաձև քառանիստ կտրվածքով ծայրեր ունեցող և երկար կլոր պոչուկով նետասլաքներից։ Չափերն են. ծայրերի երկարությունը՝ 2,5—5 սմ, պոչուկի երկարությունը՝ 1—5 սմ։ Երրորդ տարբերակը ներկայացված է առաջինին նմանվող նետասլաքներով, այն տարբերությամբ, որ ծայրերի և պոչուկի միացման տեղում արված է կլոր ինձորակ։ Չափերն են. ծայրի երկարությունը՝ 3—3,5 սմ, կոթառի երկարությունը՝ 1,5—3,5 սմ։

Քառանիստ նետասլաքների V—VIII դդ. թվագրումը դժվար է այն պատճառով, որ գերակշռող մեծամասնություն հայտնաբերվել է X—XIII դդ. շերտերում։ Սակայն այն հանգամանքը, որ նույնանման նետասլաքներ հայտնի են Գառնիի անտիկ շերտից[19] և թվագրվում են մ. թ. II դ. և Դվինի նետասլաքների մի մասը հայտնաբերվել է Կաթողիկե եկեղեցու շրջակայքում և միջնաբերդի ստորին շերտերից, մեզ հնարավորություն է տալիս ենթադրել, որ քննարկվող նետասլաքների մի մասը պատկանում է անտիկ և վաղ միջնադարյան ժամանակաշրջանին։

ՆԻԶԱԿՆԵՐ.— Դվինում հայտնաբերված նիզակները սակավաթիվ են, իրենց արտաքին տեսքով բաժանվում են մի քանի տեսակների։

Առաջին տեսակին պատկանում են հավասարապես դեպի ծայրը նեղացող ոսմրաձև կտրվածքով նիզակները (երկու հատ՝ 1980/80 և 2158/197), որոնք ունեն սայրի լայնությանը հավասար խողովակաձև կոթառներ։ Չափերն են. առաջինի երկարությունը՝ 23 սմ, սայրի երկարությունը՝ 14,5 սմ, լայնությունը՝ 3 սմ, երկրորդինը — երկարությունը՝ 19 սմ, սայրի երկարությունը՝ 12 սմ, լայնությունը՝ 2,3 սմ։ Նույն տեսակին են պատկանում երկու նիզակի սայրերը, որոնց վերին մասերը և կոթառները չեն պահպանվել (աղ. III, 2, 4)։

Երկրորդ տեսակը իրենից ներկայացնում է հավասարապես կլոր կարճ կոթառ, որի կենտրոնից ձգվում է խիստ քայքայված ոսմրաձև սայրը։ Ըստ երևույթին նա փոքր ինչ հաստանում է վերին մասում։ Կոթառը ավելի լայն է, քան սայրը և միացման տեղում ուղիղ կտրվում է։ Չափերն են. երկարությունը՝ 20 սմ, ծայրի երկարությունը՝ 14 սմ։ Այդ նույն տեսակին են պատկանում Դվինից հայտնաբերված երեք այլ նիզակների պահպանված կոթառները, սայրի մի փոքրիկ մասով, այն տարբերությամբ, որ կտրվածքում սայրերը ոչ թե ոսմրաձև են, այլ ձվաձև (1917/166, 2048/368)։ Կոթառների երկարությունը տատանվում է 5,5—6 սմ միջև (աղ. III, 1)։

Երրորդ տեսակը ներկայացված է մեկ նիզակով, որն ունի ոսմրաձև կտրվածքով նեղ, կարճ սայր՝ կենտրոնում փոքր ինչ ուռուցիկ։ Խողովակաձև կոթառը իր լայնությամբ հավասար է սայրին և պահպանված է միայն միացման տեղում։ Պահպանված մասի երկարությունը 13 սմ է, սայրի երկարությունը՝ 10 սմ։



Աղյուսակ III

Այս խմբի հետ հարմար ենք գտնում քննարկել նիզակի մի այլ տեսակ (1617/65)։ Ռուսերեն մասնագիտական գրականության մեջ զենքի այդ տեսակը անվանված է «пика», որը հայերեն սխալ թարգմանված է նիզակ (копье) կամ տեգ (дротик)։ Այդ, այնուամենայնիվ, իր նշանակությամբ զենքի այդ տեսակը պատկանում է հարվածող-ծակող զենքերի թվին։ Հնարավոր է, որ մեր պատմիչների մոտ հիշատակվող «բոլորատէգ»[20] նիզակը հենց քննարկվող զենքն է՝ լայն, գեպի ծայրը նեղացող խողովակով, որի վերջավորությունը ամրողջանում է՝ առաջացնելով մասսիվ, սուր զանգված։ Խողովակի վերին մասը ուռուցիկ է։ Նրա երկարությամբ մինչև զանգվածը անցնում է գեպի վեր լայնացող կտրվածք։ Երկարությունը 11 սմ է, տրամագիծը՝ վերին մասում 4 սմ (աղ. III, 3)։

---

[19] Б. Аракелян, Гарни, II, Ереван, 1957, էջ 46, նկ. 13։

[20] Մովսես Խորենացի, էջ 119։

Քննարկվող նիզակների ուսումնասիրությունը մեզ հնարավորություն է տալիս նրանց հարել վաղ միջնադարյան՝ ելնելով հետևյալ փաստերից։ Առաջին տեսակի նիզակների մի մասը հայտնաբերվել է միջնաբերդում եռանիստ նետասլաքների հետ, որոնք, ինչպես հայտնի է, թվագրվում են V—VIII դդ.։ Մյուս մասը հայտնաբերվել է ստորին բերդում, որի շերտից դուրս են եկել մի շարք առարկաներ, ընդ որում մեծ բանակությամբ հասարակ խեցեղեն. բացակայում է ուշ շրջանի համար բնորոշ ջնարակած խեցեղեն։ Նույն տեղից հայտնաբերվել են նաև V—VI դդ. պատկանող կնքադրոշմներ, որոնց առկայությունը հաստատում է շերտի ժամանակագրությունը։

Երկրորդ տիպի ամրողջական նիզակը հայտնաբերվել է միջնաբերդում՝ մեհյանի շրջակայքում, 4 մետր խորությունից։ Նույն շերտից հայտնաբերվել են նաև եռանիստ և ձվաձև կտրվածք ունեցող նետասլաքներ, որոնց հիման վրա տվյալ տեսակը նույնպես թվագրվում է V—VI դդ.։

Երրորդ տեսակը հայտնաբերվել է միջնաբերդում, հում աղյուսից պատրաստված VIII դ. մեծ շինության բակից։ Նիզակի հետ նույն տեղից գտնվել են եռանիստ և ռոմբաձև նետասլաքներ, կնքադրոշմներ, որոնք, ինչպես և վերոհիշյալները, թվագրվում են V—VIII դդ.։

Բոլորատեգ նիզակը (пика) հայտնաբերվել է կաթողիկոսարանի մերձակայքում՝ Հերակլի պղնձե դրամի հետ և հավանաբար պատկանում է VII դ.։

Նյութական մշակույթի մնացորդներին զուգահեռ մեր մատենագրության մեջ պահպանվել են մի շարք հիշատակություններ, որտեղ, բացի քննարկվող նիզակներից, նշվում են նաև այսպիսիները, որոնք մեզ հայտնի չեն պեղումներից (գնդարդ)։ Սակայն պատմիչների վկայությունները հնարավորություն են տալիս պնդելու, որ հայկական նիզակները եղել են ավելի բազմատեսակ և օգտագործվել են հայ մարտիկների կողմից ինչպես հետևակում, այնպես էլ հեծելազորում։

Մենք անհրաժեշտ ենք համարում նշել նաև այդ տեղեկությունները, որպեսզի ավելի լայն լինի մեր պատկերացումը վաղ միջնադարյան զենքի վերաբերյալ։

ԱՇՏԻ, ՄԿՈՒՆԴ, ՏԵԳ.— Զենքի այս տեսակները, որոնք իրենց արտաքին տեսքով շատ են նմանվում նիզակին և վերջինից տարբերվում են գուցե միայն իրենց չափսերով, օգտագործվել են որպես նետվող զենք՝ ոչ հեռու տարածության վրա թշնամուն հարվածելու համար։ Խորենացու մոտ աշտեն և մկունդ նույնացվում են «...հեռի զաշտէսն արձակեալ, որպէս ի թռիչս սրաթև հաւուց»[21]։ Տեքստից երևում է, որ մարտը վարվել է աշտեի օգնությամբ, այլ կերպ ասած՝ նիզակամարտ է տեղի ունեցել։ Սակայն, ինչպես պարզ երևում է նույն գլխի վերնագրից «Պատերազմ Մորփիւղիկեայ և մկնդահար մահ»[22], Խորենացին այդ երկու զենքերը նույնանման է համարում։ Միգուցե դրանցից մեկը եղել է ընդհանրապես զենքի անուն, իսկ մյուսը նրա տեսակներից մեկը՝ մկունդ-աշտեն։

ՍՎԻՆ.— Հարվածող-ծակող զենքերի թվին է պատկանում նաև սվինը, որն ավելի մոտ է եղել մկունդին։ Սվինի մասին հիշատակություն կա Բուզանդի՝ «Սունաւորք» ձևով[23] և Մովսես Խորենացու մոտ[24]։ «Եւ մօտ անցեալ աջողեցաւ ձգել զսուինն»,— գրում է Խորենացին։ Շատ հավանական է, որ մեր պատմիչների մոտ հիշատակվող այս զենքը իր ձևով նման է մ. թ. ա. I հազարամյակի սկզբի նիզակներին, որոնք ունեն խոզովակաձև կարճ կոթառներ, երկար, բարակ սուր բառակող ծայրեր և նմանվում են ժամանակակից քառակող սվիններին։

ՍՈՒՍԵՐ, ԹՈՒՐ, ՍՈՒՐ ԵՎ ԴԱՇՈՒՅՆ.— Դվինի պեղումներից շատ սակավ են հանդիպում կտրող-հատող զենքի տեսակները, որոնք հավանաբար ավելի ուշ շրջանի են վերաբերում։ Սակայն IV—VIII դդ. մեր մատենագրության մեջ բազմիցս հիշատակվում են այս զենքերը։

Սուսերը[25] նեղ և երկար շեղբով, սուր ծայրով զենք էր, որով խոցում և հատում էին թշնամուն։ Հայկական բանակում սուսերավորները, V դ. պատմիչ Բուզանդի տեղեկություններից ելնելով, ստվար խումբ էին և դորքի առանձին տեսակ էին կազմում[26]։

Հավանորեն սուսերի շեղբը երկսայրի է եղել[27], այլապես Վասակը ինչպես կարող էր «...ի վերս առեալ զսուսերն, զոր ընդ մէջն ունէր, հարեալ անդէն ի տեղւոջն զախոռապետն արքային

---

21 Նույն տեղում, էջ 107։

22 Նույն տեղում։

23 «Փավստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 183։

24 Մովսես Խորենացի, էջ 107։

25 «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1909, էջ 22։

26 Փավստոս Բյուզանդ, էջ 183 և 202։

27 «Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Ազուանից աշխարհի», էջ 29։

պարսից կլխատէր ի ներքս յասպաստանի անդ»[28]։ Այս տեսակետից դժվար է համաձայնվել այն ուսումնասիրողների հետ, որոնք սուսերը և սվիներ իրենց էությամբ նույնացնում են[29]։ Սուսերների հիանալի օրինակներ պատկերված են սասանյան արծաթե թասերի վրա[30]։

Խոսելով սուսերի մասին, չի կարելի անուշադրությամբ անցնել Բուզանդի հետևյալ նկարագրության կողքով. «Զարքունական սուսերն զպողովատիկն զոսկեպատեանն հանդերձ ականակապ մարգարտազարդ կամարաւն ի սպասու նորա բարձեալ ունէր»[31] և շարունակություն՝ «...թագաւորն Արշակ ինքն ձգտեալ զսուսերն արքունական կամարաւն, զոր նմա Ներսէսն բարձեալ ունէր ի սպասու թագաւորին ըստ օրինաց սենեկապետութեանն, ի բաց հաներ ի նմանէ»[32]։

Գ. Տիրացյանը շատ իրավացի է, երբ «արքունական սուսեր» արտահայտության մեջ տեսնում է զենքի հատուկ տեսակ, որը կրում էին թագավորը և նրա մերձավորները հանդեսների ժամանակ[33]։ Այդպիսի սուսերների դաստապանակները շատ երկար էին լինում[34]։ Այս սուսերը հայտնի էր դեռ Արևմտյան Պարսկաստանում և սկյութների մոտ։ Հայաստանում դա ավելի կայելի է ընդունելի համարել, որովհետև աղբյուրներում մենք ունենք «սուսեր պատերազմի»[35], որից հավանաբար տարբերվում էր «արքունական սուսերը»։

Սալը երկսայրի մի զենք էր՝ «... զոտեորեալ զմէջսն և յահեկէ զսուրն երկսայրիթ»[36] կամ «երկսայրի սրով բախեալ»[37] ավելի լայն շեղբով. քան սուսերը և բավականին երկար։ Սրի մասին հետաքրքիր հիշատակություն կա Կաղանկատվացու մոտ։ Նա գրում է. «Եւ ածապարէր ի սուրն միասեռի, որով անդէն սատկէր զմարդախուշ գազանն»[38]։ «Միասեռին» այստեղ հավանաբար հանդես է գալիս մի սայրանի իմաստով։ Հետևաբար պետք է ենթադրել, որ սրերը նաև մեկ սայրանի են եղել։

Թուրը IV—VIII դդ. պատմիչների մոտ հիշատակվում է մեկ անգամ։ Բուզանդը հայր մարդպետի զգեստավորման նկարագրության մեջ ասում է. «Եւ ագուցեալ զպատմուճանն մեծ, լաւ զգաստին ընդ մէջ իւր՝ գորմէ թուրն կախէր. և սուսեր ընդ մէջ ածեալ, և խորշ ի գոտւոյ դրատիցն իջեալ զթուրն և զսուսերն ծածկէր»[39]։

Գ. Տիրացյանը գտնում է, որ թուրը համեմատաբար ավելի կարճ է եղել և համեմատության կարգով բերում է սասանյան արծաթե թասերի վրա եղած պատկերները[40]։ Բոլոր ուսումնասիրողները գտնում են, որ թուրը մի սայրանի է եղել (Բ. Առաքելյան, Վ. Աբրահամյան)։ Ջառարկելով այդ մտքին, միևնույն ժամանակ պետք է շեշտել, որ սասանյան արծաթե թասերի վրա պատկերված թրերի մի մասը տեսքով անշուշտ երկսայրի է։

Սպառազինության մեջ են մտել նաև դաշույնի տարբեր տեսակները, որոնցից մեկի մասին հետաքրքիր տեղեկություններ կան Փավստոս Բուզանդի մոտ[41]։ Դա նրանն է, որի մասին քննություն տվել է Գ. Տիրացյանը վերոհիշյալ աշխատության մեջ։ Նրանը, ըստ հեղինակի, հավանաբար դաշույնի փոքրիկ տեսակն էր, որը կապում էին աջ ազդրի վրա։ Սակայն հետաքրքիր է նշել մի ուրիշ վկայություն։ Մովսես Կաղանկատվացու մոտ մենք հանդիպում ենք «Ներանակոտորս» արտահայտությանը, որը բոլորովին չի համընկնում նրանների կիրառությանը. «...Նրա-

---

28 Փավստոս Բյուզանդ, էջ 193—194։

29 Վ. Աբրահամյան, Միջնադարյան Հայաստանի զենքերը, Հայաստանի Պետ. պատմ. թանգարանի «Աշխատություններ», հատ. 2, Երևան, 1949, էջ 68, Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., հատ. 1, Երևան, 1958, էջ 149։

30 Г. А. Тирацян. Նշվ. աշխ., նկ. 4 և 5։

31 Փավստոս Բյուզանդ, էջ 107։

32 Նույն տեղում, էջ 108։

33 Г. А. Тирацян. Նշվ. աշխ., էջ 484։

34 Նույն տեղում, նկ. 4։

35 «Յովհաննու Մամիկոնեանի Եպիսկոպոսի Պատմութիւն Տարօնոյ», Վենետիկ, 1832, էջ 14։

36 Մովսես Խորենացի. Նույն տեղում։

37 «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 248։

38 Մովսես Կաղանկատվացի, էջ 124։

39 Փավստոս Բյուզանդ, էջ 306։

40 Г. А. Тирацян, Նշվ. աշխ., էջ 476, նկ. 1։

41 Փավստոս Բյուզանդ, էջ 348։

նակոտոր և վաղակաւոր խոցոտմամբ»[42]։ Պետք է ենթադրել, որ նրանք ավելի ուշ ժամանակներում որոշ փոփոխության է ենթարկվել և դարձել է անմիջապես հատող-կտրող զենք։

ՍԱԿՐ, ՎԱՂՐ, ՇԵՐՏ, ՏԱՊԱՐ, ՄՈՒՐՃ, ՈՒՌՆ.— Մեր հետաքրքրող ժամանակաշրջանի զենքերի տվյալ տեսակները նույնպես հայտնի չեն պեղումներից։ Սակայն պատմիչների վկայություններից պարզ երևում է, որ այս զենքերը լայն տարածում ունեին վաղ միջնադարում և նույնիսկ առանձին ընդեր կային՝ «սակրաւորք», «վաղրաւորք», «շերտաւորք»[43]։ Սրանք ռազմական կացիններ էին և որոշ ձևերով տարբերվում էին միմյանցից։ Սակրը, հավանաբար, միաբերան և երկբերան կացինն էր։ Վաղրը, տապարը, մուրճը և ուռնը[44], հավանաբար, նման զենքեր են. այս տիպի զենքը ունեցել է և՛ կտրող կողմ (կացին, տապար), և՛ ջարդող կողմ (մուրճ, ուռն), և՛ փայտից կարճ կոթ։ Այդ տեսակետից շատ ճիշտ է բնորոշում վաղրը ավելի ուշ շրջանի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը։ Նա գրում է, որ Լիպարիտը կախել էր «եւ զվաղրն ահագին ի ներքոյ բարձիցն իբր զուռն դարբնաց և կամ զսակր կտցաւոր քարահատաց՝ անցեալ ի մէջ ռազմաւոր հանդէսին»[45]։

Այսպիսով, հնագիտական նյութի և մատենագրական վկայությունների մանրազնին քննությունը ցույց է տալիս, որ վաղ միջնադարյան Հայաստանում Դվինը զինագործության խոշոր կենտրոն էր։ Զինագործության արհեստը և զենքի արտադրությունը, իր վրա կրելով նախորդ շրջանի տրադիցիաները, ավելի մասսայական բնույթ էր ստացել։

---

42 Մովսես Կաղանկատվացի, էջ 256, 273։

43 Փավստոս Բյուզանդ, էջ 183, 202։ Մովսես Խորենացի, էջ 72։

44 Ագաթանգեղոս, էջ 404։ Մովսես Խորենացի, էջ 290։ «Սեբեոսի եպիսկոպոսի պատմութիւն», Երևան, 1939, էջ 39։ Հովհան Մամիկոնյան, էջ 35։ «Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», 1852, էջ 105։ «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 75։

45 Ստեփանոս Օրբելյան, էջ 375։